ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

N 260 - Ա
„12 „ Օգոստոս 2025թ.

ք.Արտաշատ

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԵՐ ԵՎ ՇՏԱԲՆԵՐԻ ՊԵՏԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԹԻՎ 51 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի «դ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝**

1. Ստեղծել Արարատի մարզում քաղաքացիական պաշտպանության ծառայությունները և հաստատել ծառայությունների պետերի և շտաբների պետերի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Արարատի մարզպետի 2015 թվականի հուլիսի 28-ի «Արարատի մարզում քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու և ծառայության պետեր նշանակելու մասին» թիվ 51 որոշումը:

3. Ծառայության պետերին՝

երկամյա ժամկետում կազմել ծառայությունների կանոնադրությունները և պլանները, համաձայնեցնել ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Արարատի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) և համապատասխան հանրապետական ծառայությունների հետ ու ներկայացնել հաստատման:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ պետին:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի

12.08.2025թ. թիվ 260-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՏԱԲՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԿԱԶՄ

**1. Կապի ծառայության պետ**

«Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության Արարատի ցանցերի շահագործման թիմի ղեկավար՝ Արամ Վարդանյան

**Ծառայության շտաբի պետ**

«Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության էներգետիկայի գծով առաջատար ճարտարագետ՝ Աղասի Մուրադյան

**2.Ինժեներական ծառայության պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Յուրի Մարտիրոսյան

**Ծառայության շտաբի պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ Վահե Բաղդասարյան

**3.Բժշկական ծառայության պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ՝ Սուսաննա Կտրակյան

**Ծառայության շտաբի պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ Հայկ Բադալյան

4. **Տրանսպորտային ծառայության պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ Արմենակ Հակոբյան

**Ծառայության շտաբի պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ՝ Գոռ Հովհաննիսյան

5. **Առևտրի և սննդի ծառայության պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի զարգացման ծարագրերի մշակման և իրականացման բաժնի պետ՝ Վարդան Սաֆարյան

**Ծառայության շտաբի պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր իրավաբան՝ Արարատ Գոլեցյան

6. **Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության**

«Հայաստանի էլցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Արաքս» մասնաճյուղի տնօրեն՝ Սերգեյ Մանուկյան

**Ծառայության շտաբի պետ**

«Հայաստանի էլցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Արաքս» մասնաճյուղի գլխավոր ինժեներ՝ Գագիկ Հակոբյան

7. **Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ՝ Սերգեյ Կտրակյան

**Ծառայության շտաբի պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման,փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ Մարիամ Կոստանյան

**8.Հասարակական կարգի պահպանման ծառայության պետ**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արտաշատի բաժնի պետ՝ Արտավազդ Սարգսյան

**Ծառայության շտաբի պետ**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արտաշատի բաժնի պետի տեղակալ Ալիկ Ղազարյան

**9. Նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ՝ Լեռնիկ Խաչատրյան

**Ծառայության շտաբի պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման,փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝ Գոհար Մինասյան

**10 Կոմունալ-տեխնիկական ծառայության պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ Արտակ Համբարձումյան

**Ծառայության շտաբի պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենքակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ Ծերուն Թովմասյան

**11. Բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝ Հրաչ Դավթյան

**Ծառայության շտաբի պետ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ Կարինե Հայրապետյան

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ**

Восстановимая подпись

Ստորագրող
ՀՐԱՉ ԴԱՎԹՅԱՆ
1208830066

X

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝** Подписано: DAVTYAN HRACH 1208830066

**Հ.ԴԱՎԹՅԱՆ**